**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16-2**

ք.Երևան «30» « 11 » 2018թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, (գործելով Հայաստանի Հանրապետության անունից), ի դեմս ծառայության պետ Ա.Մխոյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գնորդ»), մի կողմից, և «Գարդմեն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ.Մկրտումյանի (այսուհետ՝ «Վաճառող»), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 27.04.2018թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16-2 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 և 8.8 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների թվաքանակը, կապված համաներման հետ, էական նվազել է, Գնորդի նախաձեռնությամբ կողմերը որոշեցին՝ Պայմանագրի N1 հավելվածով՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ով, նախատեսված՝ 4-րդ եռամսյակի ընթացքում, մատակարարման ենթակա 22000 կգ «շաքարավազ սպիտակ» ապրանքատեսակի քանակը նվազեցնել 18000 կգ-ով, որի գումարը կազմում է՝ 6156000 (վեց միլիոն հարյուր հիսունվեց հազար) ՀՀ դրամ, իսկ 5000 կգ «ոսպ, ամբողջական» ապրանքատեսակի քանակը նվազեցնել 5000 կգ-ով, որի գումարը կազմում է՝ 1980000 (մեկ միլիոն ինը հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, քանի որ նշված քանակների չափով վերացել է «շաքարավազ սպիտակ» և «ոսպ, ամբողջական» ապրանքատեսակների գնման պահանջը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կատարել ֆինանսական հատկացումների նվազեցում և այդ գումարի չափով նվազեցնել Պայմանագրի գինը:

1.2 Պայմանագրի 3.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Պայմանագրի գինը կազմում է 54738000 (հիսունչորս միլիոն յոթ հարյուր երեսունութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

1.3 Պայմանագրի N1 հավելվածի՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի, 7-րդ և 17-րդ չափաբաժինների սյունակը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N1-ի:

1.4 Պայմանագրի N2 հավելվածը՝ «վճարման ժամանակացույց»-ը, հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N2-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16-2 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և իր N1 և N2 հավելվածները կազմված են 6 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 և N2 հավելվածները, համարվում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ քրեակատարողական
ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
Ծառայության պետ՝
Ա. Մխոյան

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Գարդմեն» ՍՊԸ
ք. Երևան, Էրեբունի, Ավանեսովի նրբ.
8/1, 22
«ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16048272962300
ՀՎՀՀ 00464307
Տնօրեն՝
Լ. Մկրտումյան

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 1
«30» «11» 2018 թ. կնքված
N 2 Համաձայնագրի
N ՀՀ ԱՆ ԲԿԿ-ԳՀԱՊՁԲ-18/16-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ 7-ՐԴ և 17-ՐԴ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 7 | 15331153/1 | ոսպ, ամբողջական | Անուշ լինի ՍՊԸ ՀՀ | Սերտիֆիկացված ՀՍՏ-ով կամ ԳՕՍՏ-ով: Բարձրակարգ, մաքուր, գործականաչավուն: Խոնավությունը 14 %-ից ոչ ավելի, միջին չորությունը՝ 14,0-17,0 % ոչ ավելի: Աղբային և այլ խառնուրդների, վնասատուների և վարակի առկայությունը չի թույլատրվում: Փաթեթավորումը գործարանային 25-50 կգ պարկերով: Պատրաստման և պահպանման ժամկետը նշված լինի պարկի վրա: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս, քան 80%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ «Պարենային | կգ | 396 | 3960000 | 10000 | ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության հիմնարկներ՝ համաձայն բաշխման ցուցակի | 10000 | 2018թ.<br>2-րդ եռամսյակ 5000 կգ,<br>3-րդ եռամսյակ 5000 կգ,<br>եռամսյակների ընթացքում: |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | հումքի և սննդամթերքի անվտանգությանը և սննդային արժեքին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-4.9-01-2010<br><br>նորմատիվները հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրամանի և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ և 9-րդ հոդվածների: | | | | | | | |
| 17 | 15831000/1 | Շաքարավազ սպիտակ | Ալեքս Հոլդինգ ՍՊԸ ՀՀ | Բարձրակարգ, սերտիֆիկացված ԳՕՍՏ-ով, սպիտակ գույնի, սորուն, առանց համային հավելումների, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի՝ ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում: Շաքարի լուծույթը՝ թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուրդների, սախարոզի զանգվածային մասը 99,75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված), խոնավության զանգվածային մասը՝ 0,14%-ից ոչ ավել, ֆեռոխառնուրդերի զանգվածային մասը՝ 0,0003%-ից ոչ ավել: Փաթեթավորումը գործարանային 25-50 կգ պարկերով: Պատրաստման և պահպանման ժամկետը նշված լինի պարկի վրա: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ | կգ | 342 | 13338000 | 39000 | ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության հիմնարկներ՝ համաձայն բաշխման ցուցակի | 39000 | 2018թ.<br><br>2-րդ եռամսյակ 15000 կգ<br><br>3-րդ եռամսյակ 20000 կգ<br><br>4-րդ եռամսյակ 4000 կգ<br><br>եռամսյակների ընթացքում: |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | պակաս, քան 80%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ «Պարենային հումքի և սննդամթերքի անվտանգությանը և սննդային արժեքին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-4.9-01-2010 նորմատիվները հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրամանի և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ և 9-րդ հոդվածների: | | | | | | | |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011474534
ՀՎՀՀ 02204739

Ծառայության պետ՝
Ա.Մխոյան

-----------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Գարդմեն» ՍՊԸ
ք. Երևան, Էրեբունի, Ավանեսովի նրբ. 8/1, 22
«ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16048272962300
ՀՎՀՀ 00464307

Տնօրեն՝
Լ. Մկրտումյան

-----------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված N 2*
*«30» «11» 2018 թ. կնքված*
*N 2 Համաձայնագրի*
*N ՀՀ ԱՆ ՔԿԿ-ԳՀԱՊՁԲ-18/16-2 ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում | | | | |
| | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | ընդամենը |
| 4 | 15321000/1 | մրգահյութ պատրաստի օգտագործման բնական հյութ | - | 8640000 | 23040000 | 37440000 | 37440000 |
| 7 | 15331153/1 | ոսպ, ամբողջական | - | 1980000 | 3960000 | 3960000 | 3960000 |
| 17 | 15831000/1 | շաքարավազ սպիտակ | - | 5130000 | 11970000 | 13338000 | 13338000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | 54738000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն | «Գարդմեն» ՍՊԸ |
| ք. Երևան, Արշակունյաց-63 | ք. Երևան, Էրեբունի, Ավանեսովի նրբ. 8/1, 22 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011474534 | Հ/Հ 16048272962300 |
| ՀՎՀՀ 02204739 | ՀՎՀՀ 00464307 |
| Ծառայության պետ՝ Ա.Մխոյան | Տնօրեն՝ Լ. Մկրտումյան |
| ------------------------- (ստորագրություն) Կ.Տ | ------------------------- (ստորագրություն) Կ.Տ |